

ՄԱՄՈՒԼԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

26.02.2019

«Քարենսի Էյ Էմ» ՍՊԸ գործունեության վերաբերյալ

«Քարենսի Էյ Էմ» ՍՊԸ ընկերությունը 3 անգամ՝ 02.08.2017թ., 10.10.2017թ. և 16.10.2018թ., դիմել է ՀՀ կենտրոնական բանկ՝ արտարժույթի դիլերային-բրոքերային առուվաճառքի լիցենզիա ստանալու խնդրանքով, և բոլոր դեպքերում դիմումը մերժվել է:

Ընկերության տնօրեն Վահագն Գրիգորյանի հետ 3 անգամ կազմակերպվել է հանդիպում, որի ժամանակ ԿԲ մասնագետները փորձել են ստանալ լիարժեք տեղեկատվություն ընկերության բիզնես մոդելի, ռազմավարության, տեսլականի, ֆինանսական հոսքերի մասին, ինչպես նաև մատնանշվել են ընկերության կողմից թերի ներկայացված փաստաթղթերը և պարզաբանման ենթակա հարցերը, որոնց սակայն լուծում չի տրվել:

Ներկայացված դիմումները մերժվել են հետևյալ հիմնավորումներով.

1. Ընկերության ներկայացրած փաստաթղթերում նկարագրված գործունեությունը չի համապատասխանել հայցվող լիցենզիայի գործունեությանը: Մասնավորապես, ԿԲ ներկայացվել է արտարժույթի դիլերային-բրոքերային առուվաճառքի լիցենզիա ստանալու դիմում, սակայն ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերի փաթեթի ուսումնասիրությունից և տնօրենի հետ կայացած հանդիպման ընթացքում պարզվել է, որ ընկերությունը պատրաստվում է իրականացնել այլ գործունեություն, որը կարելի է վերագրել նաև արտարժույթի սակարկությունների կազմակերպմանը:
2. Ներկայացված փաստաթղթերի փաթեթը պարունակել է օրենքներին և այլ իրավական ակտերին հակասող դրույթներ, այդ թվում սպառողների շահերի պաշտպանության տեսանկյունից:
3. Ընկերության կողմից ներկայացված իր գործընկերների վերաբերյալ տեղեկատվությունը լիարժեք չի բացահայտվել:

Նշված բոլոր հիմքերը մանրամասն նկարագրված են լիցենզիայի տրամադրումը մերժելու մասին ՀՀ ԿԲ խորհրդի որոշումների մեջ, որոնք սահմանված կարգով տրամադրվել են դիմումատուին:

Ավելին, ԿԲ ուսումնասիրությամբ պարզվել է, որ ընկերության տնօրեն Վահագն Գրիգորյանը հանդիսանում է տնօրեն <http://currencii.eu/> ինտերնետային հասցեով տեղակայված Currencii ընկերությունում: Կայքում նշված է, որ ընկերությունը կարգավորվում է և լիցենզավորված է ՀՀ կենտրոնական բանկի կողմից, որը, սակայն ապատեղեկատվություն է: Սա մեկ անգամ ևս վկայում է ընկերության կողմից ոչ բարեխիղճ վարվելակերպ որդեգրելու մասին:

Կենտրոնական բանկը հարկ է համարում նաև անդրադառնալ հետևյալին.

«Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ Օրենքի համաձայն՝ Կենտրոնական բանկի հիմնական նպատակներն են ՀՀ-ում գների կայունության և **ֆինանսական կայունության ապահովումը**: Հաշվի առնելով Հայաստանի տնտեսության **զգայունությունը արտարժույթի փոխարժեքի փափանցմանի նկատմամբ**՝ ֆինանսական կայունության նպատակի ապահովման համար առաջնային նշանակություն ունի արդյունավետ արժույթային քաղաքականության իրականացումը: «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի համաձայն Հայաստանի Հանրապետությունում արժույթային քաղաքականությունը իրականացնում է ՀՀ կենտրոնական բանկը: Այդ քաղաքականության շրջանակում Կենտրոնական բանկը սահմանում է շուկայի մասնակիցների լիցենզավորման, ընթացիկ գործունեության կարգավորման և վերահսկողության կանոններ: Արժույթային շուկայի կարգավորումները ոչ միայն լիցենզավորված գործունեության համար պարզապես կանոններ են, այլ նաև ապահովում են արժույթային շուկաների կայունությունը: ՀՀ կենտրոնական բանկը նշված

կանոնակարգումների միջոցով ապահովում է գների ու ֆինանսական կայունության իր հիմնական խնդիրները՝ **զսպելով արժույթային շուկայում չարաշահումները** և զերծ պահելով ֆինանսական համակարգը արժույթային շուկերից: Նման մոտեցումն ուղղված է նախևառաջ շուկային իրավիճակներում **հասարակության լայն զանգվածների շահերի պաշտպանությանը**:

Ուսումնասիրելով արժույթային դիլեր-բրոքերների գործունեության միջազգային փորձը և այդ ոլորտում տեղի ունեցող զարգացումները՝ Կենտրոնական բանկը որդեգրել է քաղաքականություն հնարավորինս սահմանափակել շուկայի մասնակիցների կողմից չարաշահումների ռիսկը: Ինչ վերաբերում է արտարժույթի դիլերային-բրոքերային առուվաճառքի լիցենզիա ունեցող շուկայի մասնակիցներին, ապա հայտնում ենք, որ ներկայումս արժույթային շուկայում նման լիցենզիա ունեցող անձինք չկան, իսկ մոտ ապագայում Կենտրոնական բանկը նախատեսում է ընդհանրապես վերացնել լիցենզիայի այդ տեսակը: Նման սահմանափակող մոտեցում կիրառվում է արժույթային շուկերի նկատմամբ զգայուն շուկաներ ունեցող շատ երկրներում և ուղղված է ֆինանսական շուկայի կայունության ապահովմանը և սպառողների լայն զանգվածի շահերի պաշտպանությանը չարաշահումների ռիսկերից: Բացի այդ, հարկ է նշել, որ նման մոտեցման պարագայում ծառայության **հասանելիությունը սպառողների տարբեր խմբերին որևէ կերպ չի սահմանափակվի**, քանի որ նշված ծառայությունները մատուցվում են շուկայում գործող այլ ֆինանսական կազմակերպությունների կողմից՝ ինչպես մասնաճյուղային լայն ցանցի, այնպես էլ օնլայն ծառայությունների միջոցով:

Հաղորդագրությունից օգտվելու դեպքում հղումը սկզբնաղբյուրին պարտադիր է:

ԿԲ հասարակայնության հետ կապերի ծառայություն

հեռ/ֆաքս. (010) 56 37 61

էլ-փոստ. mcba@cba.am

www.cba.am